ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920—1930-ական թվականներ)

Է. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ստեղծումը և ամրապնդումը պահանջում էին նաև գյուղատնտեսության տեխնիկական կադրերի պատրաստում։ Դա գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման կարևոր կողմերից էր։ «Առանց գիտության, տեխնիկայի, փորձի, զանազան ճյուղերի մասնագետների ղեկավարության,— նշել է Վ. Ի. Լենինը,— անկարելի է սոցիալիզմին անցնելը, որովհետև սոցիալիզմը պահանջում է գիտակից և մասսայական առաջընթաց շարժում դեպի աշխատանքի ամենաբարձր արտադրողականություն՝ կապիտալիզմի համեմատությամբ և կապիտալիզմի ձեռք բերած հիմքի վրա»[1]։

Սովետական իշխանության առաջին տարիներին որոշ նվաճումներ ձեռք բերվեցին գյուղատնտեսության տեխնիկական կադրերի պատրաստման գործում։ Սակայն մինչև վերականգնման ժամանակաշրջանի վերջը Հայաստանում դեռևս բուն տեխնիկական գյուղատնտեսական դպրոցներ չէին բացվել և կադրերի մեծ պակաս կար։ Միայն 1925 թ. հողժողկոմատին և հողանտառմիությանը կից կազմակերպվեցին տրակտորիստների պատրաստման վեցամսյա դասընթացներ[2]։ 1925/26 տնտեսական տարում հողժողկոմատի կազմակերպած այդպիսի դասընթացներն ավարտեցին 48 տրակտորիստներ[3]։ 1927/28 ուստարում Հայաստանում կազմակերպվեց միամյա դասընթաց՝ 60 նոր տրակտորիստներ պատրաստելու համար։ Նույն՝ 1928 թ., Երևանում կազմակերպվել էր տրակտորիստների պատրաստման 4-ամսյա դասընթաց[4]։

Համկ(բ)կ XV համագումարը գյուղատնտեսության տեխնիկական կադրերի պատրաստման ուղղությամբ նոր պահանջներ առաջադրեց և լայն հնարավորություններ ստեղծեց։ Նա իր բանաձևերում արձանագրեց, որ «անհրաժեշտ է բոլոր ջանքերը գործադրել տեխնիկական և ագրոնոմիական կրթությունը բարելավելու և... ամենաարագ կերպով որակյալ և գիտական ուժերի կադրեր պատրաստելու համար»[5]։

Պատմական զարգացումն ընթացավ այնպես, որ Սովետական Հայաստանում, ինչպես նաև մյուս հանրապետություններում գյուղատնտեսության տեխնիկական կադրերի պատրաստումը և նյութատեխնիկական բազայի ստեղծումը ոչ թե նախորդեցին, այլ ընթացան կոլեկտիվացմանը համընթաց, հանգամանք, որը հետագայում մեծ դժվարություններ ստեղծեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։ Հետևաբար, կադրերի պատրաստումն ավելի հրատապ դարձավ առաջին հնգամյակի տարիներին (1928/29—1932/33 թթ.), երբ մեր երկրում կառուցվում էր սոցիալիզմի տնտեսական հիմքը։ Հնգամյա պլանի դիրեկտիվներում կուսակցությունն առաջ քաշեց գյուղի համար ամենատարբեր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման խնդիրը՝ որպես գյուղատնտեսության սոցիալիստական վե-

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 219։

2 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ), ֆ. 113, ց. 5, գ. 192, թ. 38, տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան. հինգ տարի. 1920—1925 թթ.», Երևան, 1926, էջ 301։

3 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 123, ց. 5, գ. 258, թ. 11։

4 «Մաճկալ», 12. IV. 1928։

5 «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», հ. 4, Երևան, 1987, էջ 410։

բակառուցման և գյուղում կոլտուրական հեղափոխության վճռական գործոն։ Այս առումով կարևոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումը։ Գյուղատնտեսական կադրերի պատրաստմանը մեծ ուշադրություն դարձրեց նաև ՀԿ(բ)Կ VII համագումարը (1930 թ. մայիս)։ Համագումարն իր բանաձևերում արձանագրեց, որ կադրերի պրոբլեմը մնում է տնտեսական շինարարության թույլ օղակներից մեկը։ Իսկ ՀՍԽՀ Կենտգործկոմը և Ժողկոմխորհը 1930 թ. հոկտեմբերի 4-ին ընդունեցին «ՀՍԽՀ ժողովրդական տնտեսության համար տեխնիկական կադրեր պատրաստելու սին»[6] որոշումը, որի համաձայն պետպլանին հանձնարարվում էր առաջին հնգամյակի ընթացքում ավելացնել արդյունաբերության և գյուղատնտեսության համար անհրաժեշտ ինժեներների, գյուղատնտեսների և տեխնիկների թիվը՝ ըստ ժողովրդական տնտեսության պահանջի։ Վերոհիշյալ որոշումները կարևոր նշանակություն ունեցան հանրապետությունում գյուղատնտեսության տեխնիկական կադրեր պատրաստելու գործում։

1929 թ. դեկտեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմը հաստատեց կոլտնտեսային կադրերի պատրաստման պլանը։ Հայաստանի բոլոր շրջաններում կազմակերպվեցին կոլտնտեսային և գյուղական ակտիվիստների, ագրոլիազորների, հաշվային աշխատողների, տրակտորիստների և այլ դասընթացներ։ 1928/29 ուստարում կազմակերպվեց միամյա դպրոց, որի նախապատրաստական դասընթացներն ավարտեցին 30 տրակտորիստներ[7]։ Նույն տարում հողժողկոմատը կազմակերպեց տրակտորիստների վերապատրաստման դասընթացներ[8]։ Նույնպիսի դասընթացներ Երևանում 1929 թ. բացել էր նաև լուսժողկոմատը[9]։ Նկատենք, որ սկզբնական շրջանում գյուղատնտեսության տեխնիկական կադրերի պատրաստմամբ հիմնականում զբաղվում էր հողժողկոմատը։ Երբեմն նմանատիպ դասընթացներ կազմակերպում էր նաև լուսժողկոմատը, որոնք ևս ղեկավարում էր հողժողկոմատը։

Տեխնիկական կադրերի պատրաստման գործը համեմատաբար ավելի կազմակերպված դարձավ 1930 թ. հետո, երբ ստեղծվեց հողժողկոմատի կադրերի վարչությունը։ Գյուղատնտեսական կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ աշխատանք ծավալեց նաև հանրապետության կոլտնտկենտրոնը։ Կոլտնտկենտրոնի կազմակերպած տարբեր դասընթացներում 1931 թ. սովորել են մոտ 15 հազար կոլտնտեսականներ, ինչպես նաև աշխատավոր մենատնտեսներ։ Գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով կարճատև դասընթացներ կազմակերպվեցին ավելի քան 10 հազար բամբակագործների համար[10]։ Հիշարժան է այն փաստը, որ առաջին հնգամյակի սկզբում մեր երկրում մյուս հանրապետությունների հետ համեմատած մեխանիզատորական կադրերով ավելի լավ էին ապահովված Անդրկովկասի, ՌՍՖՍՀ-ի և Ուկրաինայի կոլտնտեսությունները[11]։ Նկատենք, որ այստեղ ըստ էության խոսքը հիմնականում կադրերի քանակապես ավելի լինելու մասին է՝ հաշվի առած հանրապետության տարածքը և բնակչությունը։

1930 թ. Երևանում հողժողկոմատին կից հիմնադրվեց գյուղատնտեսական մեքենագիտական տեխնիկումը, որը մեծ դեր խաղաց «սոցիալիստական գյուղատնտեսությանը, ՄՏԿ-ներին, սովխոզներին, գյուղական էլեկտրակայաններին գործիմաց, ձեռներեց մասնագետներ տալու գործում»[12]։ 1931 թ. սկսած մեծ աշխատանք ծավալվեց կարճատև (10 օրից մինչև 3 ամիս)

---

6 «ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1930, № 14, բաժին I, հոդված 244։

7 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 692, ց. 1, գ. 3, թ. 6։

8 Նույն տեղում, ց. 16, գ. 266, թ. 1։

9 «Խորհրդային Հայաստան», 15. III. 1929։

10 Վ. Ն. Ղազարյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929—1937 թթ.), Երևան, 1978, էջ 41։

11 «Колхозы в 1928 г. Статистический сборник», М., 1929. с. 46, 126, 128.

12 «Կոլխոզնիկ», 1930, № 14, էջ 15։

դասընթացներում մասսայական որակավորման մեխանիզատորական կադրեր պատրաստելու ուղղությամբ։ 1932 թ. այդպիսի դասընթացներում պատրաստվեցին բույսերի պաշտպանության գծով 69 մարդ, գյուղմեքենաներ վերանորոգողներ, վարորդներ՝ 477 և այլ մասնագետներ[13]։

Առաջին հնգամյակի տարիներին Երևանից, Լենինականից և Ղարաքիլիսայից (այժմ՝ Կիրովական) բացի գյուղատնտեսական զանազան տեխնիկումներ, դպրոցներ և դասընթացներ էին գործում հանրապետության շատ ու շատ շրջաններում՝ Ղուրդուղուլիում (այժմ՝ Հոկտեմբերյան), Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին), Ղամարլուում (այժմ՝ Արտաշատ), Մեղրիում, Օշականում, Դիլիջանում, Իջևանում, Ստեփանավանում, Գորիսում, Նոր Բայազետում (այժմ՝ Կամո), Ներքին Ախտալում (այժմ՝ Հրազդան), Քեշիշքենդում (հետո՝ Միկոյան, այժմ՝ Եղեգնաձոր), Ապարանում և Սիսիանում (Ղարաքիլիսա գյուղում)[14]։

Հնգամյակի տարիներին բարձր որակավորման տեխնիկական կադրեր պատրաստելու գործում որոշ դեր խաղացին նաև հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. սեպտեմբերի 21-ի որոշման համաձայն նույն թվականի հունվարին կազմակերպված Սովետական Հայաստանի կոմունիստական համալսարանը վերակառուցվեց բարձրագույն գյուղատնտեսական դպրոցի, որը պատրաստում էր սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպիչներ՝ ՄՏԿ-ների, սովխոզների, կոլտնտեսությունների և շրջանային կուսակցական ու սովետական մարմինների ղեկավար աշխատողներ։ Հայաստանի կոմունիստական բարձրագույն դպրոցն ուներ երկու բաժին՝ կոլտնտեսային-սովխոզային-մեքենատրակտորային կայանների շինարարության (երկամյա) և կուսակցական-սովետական շինարարության (եռամյա)։ Ինչպես տեսնում ենք, հանրապետությունում տեխնիկական կադրերը պատրաստվում էին հիմնականում գյուղատնտեսական տեխնիկումներում, դպրոցներում և երկարատև ու կարճատև դասընթացներում։ Որոշ թվով կադրեր էին պատրաստում նաև բուհերը։ Սակայն հայտնի է, որ անցման շրջանում հիմնական շեշտը դրվում էր կադրերի թվի ավելացման վրա. այդ պատճառով էլ կադրերը պատրաստվում էին հիմնականում կարճատև դասընթացներում և նեղ մասնագիտությամբ։ Առաջին հնգամյակի տարիներին որոշ նվաճումներ ձեռք բերվեցին գյուղատնտեսության տեխնիկական կադրերի պատրաստման բնագավառում։ Միայն 1929—1932 թթ. հանրապետությունում պատրաստվեց մասսայական որակավորում ունեցող 2893 մեխանիզատոր[15], իսկ արդեն 1933 թ. կային 598 տրակտորիստ, 4 կոմբայնավար, 36 տրակտորային բրիգադավար և այլ մասնագետներ[16]։

Գյուղատնտեսության տեխնիկական կադրերի պատրաստման գործում կարևոր դեր խաղացին նաև հանրապետության ՄՏԿ-ները և դրանց քաղբաժինները։ Մեքենատրակտորային կայաններին կից բացվեցին կարճատև ու երկարատև դասընթացներ, որոնցում տարբեր ժամանակներում սովորել են հանրապետության գյուղատնտեսության շատ առաջավորներ։ Այսպես, 1930 թ. Սարդարապատի ՄՏԿ-ին կից բացված կարճատև դասընթացներն ավարտեցին 125 տրակտորիստ, որոնք Ղուրդուղուլիի շրջանի կոլտնտեսականներ էին[17]։ Նույն ՄՏԿ-ն մեխանիզատորական կադրեր է պատրաստել նաև Ուլու-

---

13 Մ. Հարությունյան, Գյուղատնտեսական կադրերի պատրաստումը Հայաստանում առաջին հնգամյակի տարիներին (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 9, էջ 9)։

14 Վ. Ն. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 42։

15 «Խորհրդային Հայաստանի» 15 տարին թվերով», Երևան, 1935, էջ 174։

16 Социалистическое строительство Армянской ССР (1920—1940), Ереван, 1940. с. 61, տե՛ս նաև Ա. Պ. Հայրապետյան, Սոցիալիզմի կառուցումը և կադրերի պատրաստումը Հայաստանում, Երևան, 1974, էջ 136։

17 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 501, թ. 3։

խանլուի (այժմ՝ Մասիս) նորաստեղծ ՄՏԿ-ի համար։ ՄՏԿ-ի աշխատանքը ավելի լավ կազմակերպելու համար Սարդարապատից 15 մեխանիզատորներ գործուղվեցին «Գիգանտ» սովխոզ (Հյուսիսային Կովկաս)՝ տեղի առաջավոր փորձին ծանոթանալու համար[18]։ Զոդողի մասնագիտություն ձեռք բերելու համար կադրեր ուղարկվեցին Դնեպրոպետրովսկ[19]։

ՄՏԿ-ների ցանցի ընդարձակման և գյուղատնտեսության մեջ մեքենայացման աշխատանքների կիրառման կապակցությամբ հրամայական խնդիր էր դառնում մեխանիզատորական կադրերի պատրաստումը։ Երևանում և գավառային կենտրոններում 1930 թ. գարնանը կարճատև դասընթացների միջոցով պատրաստվեցին 440 տրակտորիստ, շրջիկ մեխանիկ, նորոգող վարպետ և բամբակի շարքացանի բրիգադավար։ 1931 թ. ՄՏԿ-ների համար ավելի շատ կադրեր պատրաստվեցին, քան 1930 թ.։ ՄՏԿ-ները համալրվում էին բրիգադավարներով, վարորդներով, մեխանիկներով, փականագործներով, զոդողներով և մեխանիզատորական այլ կադրերով։ Նրանց ընդհանուր թիվը հասնում էր 421-ի։ 1932 թ. ՄՏԿ-ների դասընթացներում արդեն սովորում էր 1428 մարդ[20]։

Առանձին ուշադրություն էր նվիրվում ազգային փոքրամասնություններից կադրերի պատրաստմանը։ Այսպես, Սարդարապատի ՄՏԿ-ի տրակտորիստների դասընթացներում սովորողների 20 %-ը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ էին[21]։ 1930/31 ուստարում Հանրապետությունում տրակտորիստների դասընթացներում սովորողների թիվը կազմում էր 556 մարդ, որից 436-ը հայեր էին, 80-ը՝ ռուսներ և 40-ը՝ ադրբեջանցիներ։ Իսկ 1931/32 ուստարում 945 սովորողներից 240-ը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ էին (ռուսներ, ադրբեջանցիներ, քրդեր)[22]։

Տրակտորիստների պատրաստման գործն աստիճանաբար կենտրոնացավ սովխոզներում և ՄՏԿ-ներում, այսինքն այնտեղ, որտեղ կենտրոնացված էր հիմնական գյուղատնտեսական տեխնիկան։ Անմիջապես ՄՏԿ-ներին կից ստեղծվեցին կոլտնտեսային երիտասարդության դպրոցներ, որոնք պատրաստում էին ոչ միայն տրակտորիստներ, այլև կոլտնտեսային արտադրության ուրիշ աշխատողներ։ Սովետական Միությունում այդպիսի դպրոցների 50 %-ը կազմակերպվեց մեքենատրակտորային կայաններին կից[23]։

Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ կադրերի ուսուցումը ՄՏԿ-ներում առավելությունների հետ ուներ նաև թերություններ։ Հիմնականներից մեկն այն էր, որ մեքենատրակտորային կայաններում դասավանդող մանկավարժական կադրերը ցածրորակ էին, և դասընթացների շրջանավարտները շատ հաճախ իրենց մասնագետներ չէին զգում, արտադրության հետ չէին կապվում և հեռանում էին։ Թերություններից մեկն էլ այն էր, որ արտադրությունից չկտրված ուսուցումը դեռևս դժվար էր և, սովորաբար, վերջինս մղվում էր երկրորդ պլան։ Բանն այն է, որ երբեմն այդ դասընթացները կազմակերպվում էին գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանում ու դասավանդող մեխանիկներին և այլ մասնագետներին աշխատանքից կտրելը անհնար էր դառնում։ Էլ չենք խոսում այն մասին, որ ՄՏԿ-ները կադրերի ուսուցման համար անհրաժեշտ ուսումնական բազա չունեին։ Այդ թերություններն ու դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ էր դասընթացների հետ միասին ստեղծել մեխանիզատորների հատուկ դպրոցներ, որոնք ունենային և՛ անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, և՛ մանկավարժական կադրեր։ Սակայն անցման շրջանում դրա իրագործումը դեռևս անչափ դժվար էր՝ մեր

---

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, թ. 5։

20 Վ. Ն. Ղաղախեցյան, նշվ. աշխ., էջ 41։

21 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 901, թ. 3։

22 Նույն տեղում, ց. 58, գ. 351, թ. 33։

23 Е. И. Ларькина, Подготовка колхозных кадров в период массовой коллективизации, М., 1960, с. 138.

երկրի տեխնիկատնտեսական հետամնացության, ինչպես նաև գյուղացիների նկատմամբ կիրառվող արտատնտեսական հարկադրանքի պատճառով (նկատի ունենք հարկային սխալ քաղաքականությունը և մենատնտեսներից արտադրության բոլոր միջոցների հանրայնացումը)։

Տարիներ շարունակ գրականության մեջ նշվել է, որ երկրորդ հնգամյակի տարիներին առաջադրված «Կադրերն են որոշում ամեն ինչ» լոզունգը կադրերի պատրաստման գործում կարևոր նշանակություն ունեցավ։ Մինչդեռ այդ ժամանակաշրջանում հսկայական թվով տեխնիկական մասնագետներ անհիմն դատվեցին սաբոտաժի, դավադրության և լրտեսության մեղադրանքով։ Հայտնի է, որ գյուղի սոցիալիստական վերակառուցման տարիներին գյուղացիների ճնշող մեծամասնությունը անգրագետ էր և չէր կարողանում օգտվել ժամանակի տեխնիկայից և հաճախ այն փչացնում էր չհասկանալու պատճառով։ Սակայն վերադաս մարմինները դա որակում էին որպես դավադրություն և ձերբակալվածներին մեղադրում տրակտորներ փչացնելու, գյուղատնտեսական աշխատանքները ձախողելու մեջ՝ երկրում սով առաջացնելու նպատակով։ Այսպես գտնվեց պատասխանը 1932—1933 թթ. սովի համար, որը համատարած կոլեկտիվացման ժամանակ թույլ տրված կոպիտ սխալների հետևանք էր։

Այսպիսով, կադրերի պատրաստման կարևոր նախադրյալներից էր աշխատավորների կուլտուրական մակարդակի վերելքը՝ անգրագիտության վերացումը և համընդհանուր պարտադիր տարրական կրթությանն անցնելը։ Մեխանիզատորական կադրերի կուլտուրական մակարդակի վերելքը միաժամանակ գյուղում իրականացվող կուլտուրական հեղափոխության կարևոր կողմերից էր։ Սոցիալիստական շինարարության առաջին տարիներին միջոցներ հատկացվեցին նաև դպրոցական և կուլտուր-լուսավորական հիմնարկների կառուցմանը։ Սակայն, չնայած ձեռք բերած նվաճումներին, արդյունքները բավարար չէին։

Գյուղատնտեսական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը զանգվածային բնույթ ստացավ հատկապես 1933—1934 թթ., երբ կադրերի պատրաստման նախկին համակարգը վերակառուցվեց և դասընթացների տևողությունը երկարացվեց։ Այս կապակցությամբ Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների VII համագումարը (1934 թ. հունվար) ՀամԿ(բ)Կ Անդրերկոմին և հանրապետությունների Կենտկոմներին հանձնարարեց «բարելավել տեխնիկական կադրերի պատրաստումը բուհերում և ԲՏՈՒՀ-ներում, կիրառել անհրաժեշտ միջոցներ՝ նոր տեխնիկական ուսումնական հաստատություններ ստեղծելու ուղղությամբ, լայնորեն կազմակերպել կադրերի վերապատրաստման գործը»[24]։

1934 թ. սկզբին ՀԿ(բ)Կ Կենտկոմը խնդիր դրեց պատրաստել 450 նոր տրակտորիստ, ինչպես նաև 90 տրակտորային բրիգադավար։ Դասընթացները կազմակերպվելու էին ՄՏԿ-ներում, ընդգրկելով նաև կանանց։ Կադրերի պատրաստումը կատարվում էր գրեթե բոլոր ՄՏԿ-ներում, սակայն հիմնական բազան Վաղարշապատի տրակտորային դպրոցն էր։ Այստեղ սկսվեց նաև կոմբայնավարների պատրաստումը։ 1934 թ. Սարդարապատի ՄՏԿ-ին կից բացվեցին տրակտորիստների պատրաստման եռամսյա և վերապատրաստման միամսյա, ինչպես նաև տրակտորային բրիգադավարների վերապատրաստման 20-օրյա դասընթացներ[25]։ Նույն թվականին Լենինականի ՄՏԿ-ին կից բացվեցին կոմբայնավարների ու կալսիչավարների պատրաստման և վերապատրաստման դասընթացներ[26]։ 1935 թ. տրակտորիստների 4-ամսյա դասընթացներ կազմակերպվեցին Նոր Բայազետի ՄՏԿ-ում[27]։ Այստեղ նույնիսկ ստեղծվել էր «Տիրապետել տեխնիկային» խմբակ, որտեղ որակյալ տրակտորիստ-

---

24 «Խորհրդային Հայաստան», 26. I. 1934։

25 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 20. III. 1934։

26 Նույն տեղում, 24. V. 1934։

27 «Խորհրդային Հայաստան», 27. VIII. 1935։

ների օգնությամբ պատրաստվում ու վերապատրաստվում էին երիտասարդ մեխանիզատորներ։ Նույն տարում տրակտորիստների պատրաստման դասընթացներ կազմակերպեց նաև Ապարանի ՄՏԿ-ն[28]։

1936 թ. կոմբայնավարների պատրաստման գործը փոխադրվեց Լենինական և կազմակերպվեց գյուղատնտեսության տեխնիկական կադրերի կոմբինատ[29]։ Այնուհետև դրան միացվեց նաև Վաղարշապատի տրակտորային դպրոցը։ Նկատի ունենալով միացյալ դպրոցի ապահովվածությունը համեմատաբար որակյալ ուսուցչական, ինժեներատեխնիկական կադրերով և նյութական բազայով, դրան միացվեց նաև Երևանի ավտովարորդական դպրոցը (1940 թ. մեխանիզատորների հանրապետական դպրոցը Լենինականից փոխադրվեց Երևան)։ Նույն՝ 1936 թ., ՀՍՍՀ հողժողկոմատի կադրերի բաժինը կազմակերպեց տեխնիկական կադրերի միամյա դպրոց[30]։

1930-ական թվականների կեսերին Հայաստանում թե՛ քանակապես, թե՛ որակապես աճեցին գյուղատնտեսության տեխնիկական կադրերը։ Միայն երկու տարվա ընթացքում ՄՏԿ-ների մեխանիզատորական կադրերի թիվն ավելացավ 29 %-ով (723-ից հասնելով 933-ի)[31]։ 1933—1935 թթ. Սովետական Հայաստանում պատրաստվեցին մասսայական որակավորման 3720 մեխանիզատոր, 81 մելիորատոր և այլ մասնագետներ։ 1937 թ. տրակտորիստների թիվը 1933 թ. համեմատությամբ 598-ից հասավ 2131-ի։ Համապատասխանաբար աճեց տրակտորային բրիգադավարների թիվը՝ 36-ից հասնելով 349-ի, իսկ կոմբայնավարներինը՝ 4-ից 106-ի։ Բացի այդ, 1937 թ. ՄՏԿ-ներում աշխատում էին 134 վարորդ, 248 վերանորոգող վարպետ, 104 մեխանիկ, 141 կալսիշավար և այլ մասնագետներ[32]։ Սակայն դա չի նշանակում, թե սոցիալիզմի կառուցման տարիներին հանրապետության գյուղատնտեսության համար արդեն ստեղծվել էր անհրաժեշտ նյութատեխնիկական բազա։ Գյուղի տեխնիկական և սոցիալական վերակառուցումը ծավալվեցին միաժամանակ, որպես միասնական գործընթացի երկու կողմեր։ Սակայն գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերակառուցումն ավելի շուտ ավարտվեց, քան տեխնիկական վերակառուցումը։ Անգամ երկրորդ հնգամյակի վերջում հանրապետության գյուղատնտեսության էներգառեսուրսների կազմում հիմնական տեղը պատկանում էր բանող անասուններին (67,2 %)[33]։ Հետևաբար, երբ խոսում ենք կադրերով ապահովվածության մասին, հիմնականում նկատի ունենք եղած տեխնիկան գործի դնող կադրերին։ Էլ չենք ասում, որ առաջին և երկրորդ հնգամյակների մասին անհրաժեշտ է վերապահությամբ խոսել. ժամանակին դրանց կատարման արդյունքները մտացածին կերպով ուռճացվել են և ռեալ վիճակին չեն համապատասխանել։

Գյուղատնտեսության տեխնիկական կադրերի հարցը լուսաբանելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև կադրերի համալրման հիմնական աղբյուրներին։ Ինչպես արդեն նշել ենք, առաջին հնգամյակի տարիներին տեխնիկական կադրերի մեծ կարիք կար։ Կոլտնտեսությունները, սովխոզները և ՄՏԿ-ները դեռևս ի վիճակի չէին սեփական միջոցներով լրացնելու անհրաժեշտ կադրերի պակասը, ստեղծելու մշտական, կայուն կադրեր։ Այդ գործում գյուղի սոցիալիստական վերակառուցման հենց առաջին տարիներից նրանց օգնության հասավ բանվոր դասակարգը։ Բանվորական բրիգադները գյուղացիությանն արտադրական մեծ օգնություն ցույց տվեցին և նպաստեցին կոլտնտեսային կարգի զարգացմանը։ Նրանք կազմակերպում էին մեխանիզատորական դասընթացներ, որտեղ իրենց գիտելիքներն էին հաղորդում գյուղա-

28 Նույն տեղում, 30. I. 1935։

29 Նույն տեղում, 3. VIII. 1935։

30 Նույն տեղում։

31 Итоги работы машинно-тракторных станций за 1933 и 1934 гг. (по материалам годовых отчетов)», М., 1936, с. 66.

32 «МТС во второй пятилетке», М.—Л., 1939, с. 90. 94.

33 Նույն տեղում, էջ 87։

տնտեսության բնագավառի աշխատողներին։ Այսպիսով, գյուղատնտեսության տեխնիկական կադրերը սկզբում համալրվում էին արդյունաբերական շրջանների բանվորների հաշվին։

Աստիճանաբար, կոլեկտիվացմանը համընթաց, տեխնիկական կադրերը սկսեցին համալրվել հիմնականում ՄՏԿ-ների կողմից սպասարկվող շրջանների գյուղացիներից (կոլտնտեսականներից և մենատնտեսներից), որոնք մեքենատրակտորային կայանների կարճատև և երկարատև դասընթացներում ձեռք էին բերում մեխանիզատորի մասնագիտություն։ Այստեղ պետք է ընդգծել, որ մեխանիզատորական տարբեր խմբերի ձևավորումը միևնույն ուղիով չի ընթացել։ Նրանց մի խումբը աշխատանքի անցավ պետական ձեռնարկություններում՝ որպես ՄՏԿ-ների բանվորներ, մյուսները՝ տրակտորիստներն ու կոմբայնավարները, մնացին կոլտնտեսություններում։ ՄՏԿ-ների հաստիքային աշխատողներ դարձան նաև վերանորոգող բանվորները։ Դա պատահական չէ. եթե մեխանիզատորները համալրվում էին հիմնականում կարճատև դասընթացներում պատրաստված կոլտնտեսականների հաշվին, ապա խառատի, փականագործի, դարբնի մասնագիտությունները պահանջում էին ավելի երկարատև ուսուցում, այն էլ արդյունաբերական արտադրության պայմաններում։ Իսկ ՄՏԿ-ների շինարարության սկզբնական շրջանում վերանորոգման գործի համար անհրաժեշտ բազա չկար։ Այդ պատճառով էլ ՄՏԿ-ների վերանորոգող կադրերը մեծամասնությամբ ձևավորվում էին արդյունաբերական բանվորների հաշվին։ Շուտով ՄՏԿ-ներում հանդես եկան մի շարք լավագույն վերանորոգող վարպետներ՝ Ս. Պողոսյանը (Սարդարապատի ՄՏԿ-ից), Ե. Սիմոնյանը (Լենինականի ՄՏԿ-ից), Մ. Թորոսյանը (Ստեփանավանի ՄՏԿ-ից) և ուրիշներ։ Իսկ Վաղարշապատի ՄՏԿ-ի վերանորոգող վարպետ Ա. Գևորգյանը կայանում կազմակերպել էր ազդանշանային պահակակետ, որն ամեն օր գրանցում էր վերանորոգման արհեստանոցների աշխատանքի թերությունները[34]։ Աշխատանքային օրվա վերջում կատարվում էր առանձին բրիգադների աշխատանքի հաշվառում, իսկ 39 հարվածայիններ ներգրավվել էին սոցիալիստական մրցության մեջ։

Կոլեկտիվացումն ընդհանրապես մեծ պահանջ էր ներկայացնում կադրերի նկատմամբ։ Ուստի երկրորդ հնգամյակի ընթացքում, ինչպես նաև հետագայում մեծ աշխատանք կատարվեց սոցիալիստական գյուղատնտեսության կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ։ Առաջին հերթին անհրաժեշտ էր ստեղծել կայուն, մշտական կադրեր, վերացնել կադրերի շրջանում գոյություն ունեցող հոսունությունը։ ՍՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի 1933 թ. սեպտեմբերի 21-ի «Տրակտորային պարկի օգտագործումը կազմակերպելու մասին» որոշման մեջ նշվում էր. «Մինչև այժմ չեն ստեղծվել տրակտորիստների կայուն որակյալ կադրեր, նրանց շարքերում հոսունությունը հասնում է նշանակալի չափերի, թույլ է կարգապահությունը, ընտրություն չի կազմակերպվում և տրակտորիստների շարքերում խցկվել են անհուսալի տարրեր»[35]։ Մեխանիզատորական կադրերի հոսունության պատճառները պետք է փնտրել նրանց աշխատանքի և վարձատրության անբավարար դրվածքի մեջ։ Կոլտնտեսային շինարարության առաջին տարիներին մեխանիզատորների վարձատրման համակարգն ուներ մի շարք թերություններ՝ կիրառվում էր «ձախ» հավասարեցման կարգը, բացակայում էր աշխատանքի երաշխավորված նվազագույնը։ Հաճախ մեխանիզատորները նույնիսկ չգիտեին, թե որտեղից պետք է ստանան իրենց աշխատավարձը՝ ՄՏԿ-ից, թե կոլտնտեսությունից։ Փաստորեն, պետությունն աշխատավորների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու կոնկրետ միջոցառումներ չէր մշակում։ Եթե ավելացնենք նաև աշխատավորների նյութական-կենցաղային անբավա-

---

34 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 4, գ. 582, թ. 17։

35 «Коллективизация сельского хозяйства. Важнейшие постановления Коммунистической партии и Советского правительства 1927—1935 гг.». М., 1957, с. 468—472, с. 384.

բար պայմանները, ապա պատկերն ավելի պարզ կդառնա։ Բազմաթիվ էին դեպքերը, երբ տրակտորիստի մասնագիտություն ստացած երիտասարդները, հատկապես քաղաքաբնակները, հրաժարվում էին գյուղ մեկնելուց և աշխատում էին քաղաքում՝ որպես ավտովարորդներ[36]։ Ճիշտ է, որոշ միջոցառումներ ձեռնարկվեցին կադրերի հոսունությունը վերացնելու ուղղությամբ։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. փետրվարի 4-ի «Կոլտնտեսությունները կազմակերպորեն-տնտեսապես ամրապնդելու մասին» որոշմամբ նպատակահարմար գտնվեց աշխատանքների կազմակերպման հիմնական օղակ դարձնել արտադրական բրիգադները, որոնք պետք է մշտական կազմ ունենային ու կատարեին որոշակի տեղամասի բոլոր աշխատանքները[37]։ Հանրապետությունում կազմակերպվեց փորձնական երեք բրիգադ (Հոկտեմբերյանի շրջանի Սարդարապատ, Ղարաքիլիսայի՝ Համզաչիման և Համամլու (այժմ՝ Սպիտակ) գյուղերում, որոնց գործունեությունը ուսումնասիրվեց և 1932 թ. գարնանը տարածվեց բոլոր շրջաններում[38]։ Կոլտնտկենտրոնը խորհուրդ էր տալիս կոլտնտեսություններում աշխատանքները կազմակերպել բրիգադներով, նրանց ամրացնելով բանուժ, հողամաս և գործիքներ։ Նշենք, որ այս ժամանակ Հայաստանում ստեղծված արտադրական բրիգադները ՍՍՀՄ-ում ամենախոշորներից էին[39]։

Այս շրջանում արտադրական բրիգադների կողքին դեռևս լայնորեն կիրառվում էր աշխատանքի վարձատրման գործավարձային մեթոդը, որն ավելի մատչելի էր երեկվա մենատնտեսին։ 1935 թ. հանրապետության կոլտնտեսություններում բրիգադները դարձել էին հիմնական արտադրական միավոր։ Կազմակերպվել էին նաև անասնապահական ֆերմաներ, որոնք չնայած դեռևս շատ փոքր էին, բայց հանրային անասնապահության հետագա զարգացման հիմք էին դառնում։

Մշտական բրիգադների ստեղծումը համեմատաբար կարևոր նշանակություն ունեցավ տեխնիկայի արդյունավետ օգտագործման, բրիգադի անդամների անձնական պատասխանատվության բարձրացման և, վերջապես, երկրորդ հնգամյակում ՄՏԿ-ների և կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման համար։ Տրակտորիստների նյութական վիճակի բարելավման գործում կարևոր դեր խաղաց ՍՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի հիշյալ որոշումը։ Եթե առաջին հնգամյակում մեխանիզատորը և կոլտնտեսականը վարձատրվում էին նույն կարգով, ապա այժմ տրակտորիստների վարձատրման համար սահմանվեց նոր կարգ։ Ավագ տրակտորիստների համար մտցվեց համեմատաբար բարձր վարձատրություն։ Տրակտորիստն աշխատանքի էր նշանակվում ՄՏԿ-ի դիրեկտորի հրամանով և առանց վերջինիս համաձայնության իրավունք չուներ հեռանալու[40]։

Հանրապետության գյուղատնտեսության տեխնիկական կադրերի նյութական-կենցաղային վիճակի բարելավման հարցին էր նվիրված ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1933 թ. նոյեմբերի 2-ի որոշումը, որտեղ նշվում էին այդ խնդրի լուծման ուղիները[41]։ Դեռևս 1930 թ. հունվարին ՍՍՀՄ աշխժողկոմատը համապատասխան մարմիններին պարտավորեցրեց հետագա 2 տարիների ընթացքում բարելավել ՄՏԿ-ների, սովխոզների և կոլտնտեսությունների աշխատողների բնակարանային պայմանները։ Հարցը քննարկեց նաև Անդրֆեդերացիայի աշխժողկոմատը, որը մշակեց հատուկ միջոցառումների պլան և երեք հանրապետություններին պարտավորեցրեց ձեռնամուխ լինել դրա կատարմանը[42]։ Արդեն երկրորդ հնգամյակի առաջին տարիներին Հայաստանի

36 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 5, գ. 887, թ. 24։

37 «Коллективизация сельского хозяйства», с. 409—410.

38 Գ. Մ. Գեղամյան, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում նեպի տարիներին (1921—1936), Երևան, 1978, էջ 202։

39 «Социалистическое народное хозяйство СССР в 1933—1940 гг.», М., 1963 с. 384.

40 «Коллективизация сельского хозяйства», с. 471.

41 «ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1933, № 6, հոդված 106։

42 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 65, ց. 8, գ. 185, թ. 31։

ՄՏԿ-ների և սովխոզների աշխատողների մեծ մասն ապահովվել էր բնակարաններով, համեմատաբար բարելավվել էր նրանց նյութական մատակարարման գործը, կարգավորվել էր վարձատրման կարգը և այլն[43]։ Ուշադրություն էր դարձվում նաև ՄՏԿ-ների և կոլտնտեսությունների սոցիալական ապահովագրության հարցերին։ ՀՍՍՀ ժողկոմխորհի 1931 թ. հունիսի 2-ի որոշմամբ միջոցառումներ էին նախատեսվում ՄՏԿ-ների աշխատողների բժշկական սպասարկման համար[44]։ ՄՏԿ-ներն զբաղվում էին նաև աշխատավորների շրջանում սպորտի և ֆիզկուլտուրայի տարածման գործով[45]։ Կարևոր նշանակություն ունեցավ ՀՍԽՀ ժողկոմխորհի 1936 թ. փետրվարի 2-ի «ՄՏԿ-ներում 6-օրյա աշխատանքային շաբաթի անցնելու մասին» որոշումը[46] (մինչև այդ որոշումը ՄՏԿ-ներում գոյություն ուներ 7-օրյա աշխատանքային շաբաթ)[47]։

Սոցիալիզմի կառուցման տարիներին, չնայած կիրառվող անօրինական հալածանքներին, այնուամենայնիվ, որոշ չափով բարձրացավ գյուղատնտեսության տեխնիկական կադրերի արտադրական և սոցիալական ակտիվությունը։ Նրանք ներգրավվեցին սոցիալիստական մրցության մեջ և ստանձնեցին բարձր պարտավորություններ՝ նպաստելով աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը։ Մրցության և փոխադարձ օգնության շնորհիվ կարճ ժամկետում ՄՏԿ-ներում աճեցին արտադրության լավագույն կազմակերպիչներ ու առաջավորներ, որոնք մեծ դեր խաղացին գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում (Ա. Մանուկյանը՝ Բասարգեչարի (այժմ՝ Վարդենիս) ՄՏԿ-ից, Ս. Տոնոյանը, Ա. Պոլոսյանը՝ Լենինականի ՄՏԿ-ից, Ս. Կարակուլյանը՝ Ղամարլուի ՄՏԿ-ից և շատ ուրիշներ), 1931 թ. Հանրապետության Կենտգործկոմի նախագահության որոշումով Ուլուխանլուի ՄՏԿ-ի տրակտորիստ Սահակ Խանգելդյանը պարգևատրվեց ՀՍԽՀ աշխատանքի դրոշի շքանշանով։ Իսկ Լենինականի ՄՏԿ-ի կոմբայնավար Գուրգեն Մարջանյանը ՍՍՀՄ Կենտգործկոմի որոշումով պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Երկրորդ հնգամյակում Հայաստանում իրենց հարվածային աշխատանքով աչքի ընկան առաջին կին տրակտորիստները՝ Անիկ Ասոյանը, Հայաստան Բաբայանը և ուրիշներ, որոնց անունը շուտով տարածվեց հանրապետությունում։ Իսկ ընդհանրապես կին մեխանիզատորների թիվը երրորդ հնգամյակի տարիներին ավելացավ, հանդամանք, որը կարևոր նշանակություն ունեցավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատ մեկնած տղամարդկանց կանանցով փոխարինելու գործում։

Բարձրացավ մեխանիզատորական կադրերի հասարակական-քաղաքական ակտիվությունը, աշխուժացավ նրանց գործունեությունը կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպություններում։ Նրանք միաժամանակ օգնեցին գյուղում կուլտուր-լուսավորչական աշխատանքի ծավալմանը։ ՄՏԿ-ների բանվոր-ծառայողներն ակտիվորեն մասնակցում էին գյուղսովետների ընտրություններին, նրանց աշխատանքներին։ ՄՏԿ-ներին կից ստեղծվել էին դեպուտատական խմբեր, որոնց շուրջն էին համախմբվել գյուղական լայն զանգվածներ։ ՄՏԿ-ները հանրապետության սովետների համագումարներում առաջադրում էին իրենց թեկնածուներին։ Ախտայի ՄՏԿ-ից Խաչատուր Սարգսյանը, Ղամարլուի ՄՏԿ-ից Հովհաննես Հովհաննիսյանն ընտրվեցին ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատներ, իսկ հանրապետության Գերագույն սովետի դեպուտատներ ընտրվեցին 7 տրակտորիստ[48]։ Ընդհանրապես գյուղատնտեսական կադրերի պատրաստումն ավելի կազմակերպված հունով կընթանար, եթե դրա վրա չազդեին անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի բացասական հետևանքները։

---

43 «Трактороцентр (информационный бюллетень)», 1932, № 22, с. 15.

44 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 123, ց. 5, գ. 483, թ. 60—63։

45 «Խորհրդային Հայաստան», 22. XI. 1934։

46 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 4, գ. 2323, թ. 4։

47 Նույն տեղում, ֆ. 65, ց. 2, գ. 900, թ. 28։

48 «Խորհրդային Հայաստան», 15. VI. 1938, 14. VII. 1938։

Այսպիսով, գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը և տեխնիկական կադրերի պատրաստումը որոշ դեր խաղացին կոլտնտեսությունների տնտեսական ու կազմակերպական ամրապնդման գործում։ Հիմնականում ավարտվեց գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը, թեև մեքենայացման աշխատանքները շարունակվում էին նաև երրորդ հնգամյակի տարիներին և ավարտվեցին միայն հետպատերազմյան ժամանակաշրջանում։

ПОДГОТОВКА В АРМЕНИИ ТЕХНИЧЕСКИХ КАДРОВ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА (1920—1930-ые годы)

Э. Г. ГЕВОРКЯН

Резюме

В переходный период в Армении были достигнуты определенные успехи в подготовке технических кадров для сельского хозяйства. В республике открывались краткосрочные и долгосрочные курсы, сельскохозяйственные школы, техникумы, вузы для подготовки технических кадров. Однако в этот период основной упор ставился на увеличение количества кадров, в силу чего кадры готовились в основном на краткосрочных курсах и по узкой специальности. В Советской Армении, как и в других республиках, начало подготовки технических кадров сельского хозяйства и создание его материально-технической базы не предшествовали коллективизации, а совершались одновременно с ней.

Коммунистическая партия и правительство Армении приняли ряд мер по созданию постоянных кадров, устранению их текучести, правильной организации труда и оплаты, улучшению материально-бытовых условий технических кадров, повышению их культурного уровня. Повысилась производственная, социальная и общественно-политическая активность технических кадров, благодаря чему в деревне появился новый социальный слой—многочисленный отряд механизаторов.